**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

---

**ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան 15 ապրիլի 2022 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի

Անդամակցությամբ՝ Վ. Գրիգորյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Մարգո Մարգարյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց.**

**1.** Մարգո Մարգարյանը (ներկայացուցիչ՝ Տ. Խուրշուդյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2022 թվականի մարտի 29-ին)՝ խնդրելով.

«Ճանաչել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրության 73-րդ և 79-րդ հոդվածներին հակասող»:

**2.** Դիմողը նշում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 224-րդ հոդվածով սահմանել է, որ բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր գույքը պատկանում է բազմաբնակարան բնակելի շենքի և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով, ավելին՝ նշվածի արդյունքում, ըստ դիմողի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, այդ թվում՝ դատարանները նշված նորմը կիրառում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը կառուցված բազմաբնակարան բնակելի շենքի և (կամ) ոչ բնակելի տարածքների նկատմամբ: Այսինքն՝ դիմողի մեկնաբանմամբ՝ Օրենսգրքի 224-րդ հոդվածին տրվել է հետադարձ ուժ, ինչի ուժով մինչև Օրենսգրքի ուժի մեջ մտնելը կառուցված և պետությանը սեփականության իրավունքով պատկանող բազմաբնակարան բնակելի շենքի և (կամ) ոչ բնակելի տարածքների ընդհանուր տարածքների նկատմամբ ծագել է բազմաբնակարան բնակելի շենքի և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

Ըստ դիմողի՝ որևէ հոդվածով չի սահմանվել, թե արդյո՞ք վիճարկվող նորմը կիրառելի է մինչև ուժի մեջ մտնելը կառուցված բազմաբնակարան բնակելի շենքի և (կամ) ոչ բնակելի տարածքների նկատմամբ, թե՝ ոչ, բացի դրանից, ոչ Օրենսգրքի 224-րդ հոդվածով և ոչ էլ նշված հոդվածը լրացնելու և փոփոխություններ կատարելու մասին օրենքով հստակ չի սահմանվել հետադարձ ուժ տալու որևէ կարգավորում: Սակայն դիմողը գտնում է, որ գործնականում ինչպես տեղական ինքնակառավարման մարմինները, այնպես էլ ՀՀ կադաստրի պետական կոմիտեն, դատարանները և այլ պետական մարմինները վիճարկվող նորմը կիրառում են նաև մինչև դրա ուժի մեջ մտնելը կառուցված բազմաբնակարան և (կամ) ոչ բնակելի տարածքների նկատմամբ:

Դիմողն արձանագրում է, որ օրենսդրի կողմից Օրենսգրքի 224-րդ հոդվածին հետադարձ ուժ տալով՝ խախտվել է Սահմանադրության 73-րդ հոդվածը, քանի որ, ըստ դիմողի, իրավական ակտի հետադարձությունը թույլատրվում է բացառիկ դեպքերում, և օրենսդրի կողմից այդ ակտին հետադարձ ուժ պետք է հաղորդվեր հնարավոր իրավական հետևանքների բազմակողմանի վերլուծության և գնահա-

տականի հիման վրա, իսկ տվյալ դեպքում Օրենսգրքի 224-րդ հոդվածին հետադարձ ուժ տալու հետևանքով, դիմողի կարծիքով, իր իրավական վիճակը վատթարացել է, քանի որ մինչև այդ նկուղը համարվել է պետության սեփականությունը, և եթե վիճարկվող հոդվածին հետադարձ ուժ չտրվեր, ապա դիմողը, իր մեկնաբանմամբ, Օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով կարող էր նկուղի նկատմամբ ձեռք բերել սեփականության իրավունք:

Հետևաբար՝ ըստ դիմողի՝ իր կողմից նկուղի հանդեպ ունեցած «օրինական ակնկալիքը» հիմնված է եղել Օրենսգրքի 187-րդ հոդվածի և դրա հիման վրա ձևավորված նախադեպային իրավունքի վրա և համարվել է «գույք»՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից առաջին արձանագրության առաջին հոդվածով, հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասը, դիմողի պնդմամբ, հակասելով Սահմանադրության 73 և 79-րդ հոդվածներին, հանգեցրել է իր՝ Սահմանադրության 2-րդ գլխով ամրագրված սեփականության իրավունքի զրկման:

**3.** Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածը, սահմանելով անհատական դիմումներին ներկայացվող սահմանադրական պահանջները, միաժամանակ նախատեսում է, որ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել,

թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել, և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում իր դիմումի հիման վրա գործի քննության արդյունքում՝ հիմնավորելով նաև իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով ամրագրված են Սահմանադրական դատարանի կողմից գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու հիմքերը: Մասնավորապես՝ նշված օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե **դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին**:

Սույն դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է դատական ակտի օրինականության, դատարանի գործողությունների իրավաչափության հարցեր: Մասնավորապես դիմողի կողմից ներկայացված հիմնավորումների բովանդակությունից հետևում է, որ թիվ ԵԿԴ/0010/02/14 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 2021 թվականի ապրիլի 30-ի որոշմամբ կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասը, սակայն, ըստ դիմողի, վիճարկվող դրույթը սույն գործով չպետք է կիրառվեր, քանի որ ինքը, հանդիսանալով Նալբանդյան փողոցի 41/1 շենքի թիվ 17 բնակարանի սեփականատեր, վիճելի նկուղը տասը տարուց ավելի, անընդմեջ, բացահայտ և բարեխիղճ տիրապետել է, հետևաբար տվյալ դեպքում կիրառման ենթակա են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կարգավորումները:

Մասնավորապես, դիմողը նշում է. *«...Վերաքննիչ դատարանը կիրառել է Դիմումատուների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ Նկուղը նախ համարել է բազմաբնակարան շենքի շինությունների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, այնուհետ՝ նկատի ունենալով, որ ք. Երևան, Նալբանդյան փող., թիվ 41/1 բազմաբնակարան շենքի և շինությունների բոլոր սեփականատերերը չեն տրամադրել*

*իրենց համաձայնությունը՝ Նկուղը Դիմումատուներին հանձնելու վերաբերյալ, ուստի հանգել է այն հետևության, որ Դիմումատուները չեն ապացուցել իրենց կողմից գույքի փիրապետման բարեխղճության պայմանի առկայության մասին»:*

Միաժամանակ, դիմողը կարծում է, *որ «... բոլորին հասկանալի է, որ եթե Վերաքննիչ դատարանը որոշմամբ Նկուղը չհամարեր ք. Երևան, Նալբանդյան փող., թիվ 41/1 բազմաբնակարան շենքի և շինությունների սեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականություն, ապա սեփականատերերի համաձայնությունը ներկայացնելու անհրաժեշտությունը չէր առաջանա, այսինքն՝ կհիմնավորվեր բարեխղճության պայմանի առկայությունը»:*

Դիմումով ներկայացված հիմնավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանով չեն ներկայացվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի հակասահմանադրականության կամ այդ նորմին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականության վերաբերյալ հիմնավորումներ, մինչդեռ դիմումով ներկայացված բոլոր հիմնավորումները հանգում են թիվ ԵԿԴ/0010/02/14 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2021 թվականի ապրիլի 30-ի որոշման օրինականության, դատարանի գործողությունների իրավաչափության վիճարկմանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ ձևականորեն ներկայացնելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության, **բարձրացնում է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական ակտի օրինականության, դատարանի գործողությունների իրավաչափության հարցեր**, իսկ այդպիսի դիմումները, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, ենթակա են մերժման՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ (և հետագայում 13.11.2012թ. ՍԴԱՈ-80, 08.04.2014թ.

ՍԴԱՈ-13, 07.04.2015թ. ՍԴԱՈ-19, ինչպես նաև 05.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-4, 18.02.2016թ. ՍԴԴԿՈ/1-5, 21.03.2016թ. ՍԴԴԿՈ/1-9, 02.04.2016թ. ՍԴԴԿՈ/1-13 և այլ որոշումներով վերահաստատված) իրավական դիրքորոշում է արտահայտել, համաձայն որի՝ «(...) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց (...), ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (...) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Մարգո Մարգարյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Խաչատրյան

Անդամներ՝ Վ. Գրիգորյան

Ա. Թունյան

15 ապրիլի 2022 թվականի
ՍԴԴԿՈ – 21